ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2023 թվականի N 79 - Ն

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՊԱՀԱՆՋ ՉՆԱԽԱՏԵՍՈՂ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ, ԿԱՆԱԴԱՅԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ, ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՃԱՊՈՆԻԱՅԻ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Լիցենզավորման մասին» 7-րդ հոդվածի 6.4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից փոստային կապի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու թույլտվության տրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու թույլտվության տրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու թույլտվության տրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) օտարերկրյա իրավաբանական անձանց երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) օտարերկրյա իրավաբանական անձանց մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ